




Կանոնագրության

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ



ԵՐ
ԱՌԱՋՆՈՐԴ ԼԱՑԱՌԱԿԱՆԱՑ



ԿՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ




Թիբ 31



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԴԺ

ՅԱՆՎԱՐԻ ԴԱՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ



ԴԺ

ԴԺ



ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ


ՀԱՆԳԻՍ ٢٠٢٠ هـ HANBAKIDAGUE
ՀԱՐԱԹԱԿԱՆ مجموعه علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 31 || 2 ՕԳՈՍՏՈՍ 1903

ԱՌՍՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԳԻՒՏԵՐ


Չեֆերու համար նոր գործիք մը . — Թիւ մը կամ ստորագրութիւն մը անեղծ ընելու համար շինուած է տեսակ մը մամուլ որ կը կէտկիտէ գումարը կամ ստորագրութիւնը : Ո՛չ քերթիչ ո՛չ ուրիշ նիւթեր չեն կրնար աւրել եւ հետեւապէս կեղծել այս կեր-




պով կէտկիտուած թիւ մը կամ ստորագրութիւն մը : Այն մամուլներն որք մինչեւ հիմա կը գործածուէին պանքաներու մէջ , հիմա տեղի տուած են այս նոր գործիքին առջեւ որ շատ ածան է եւ ամէն մարդ կրնայ գործածել : Կը բաղկանայ փոքրիկ մետաղեայ ունելիէ մը որ երկու խթանիւ ունի : Երբ կարեւոր թուղթի մը վրայ դրուած թիւ մը կամ ստորագրութիւն մը անեղծ ընել ուզ-

ուի, կը բաւէ թուղթն անցընել երկու խթանիւններուն մէջէն, ինչպէս ցոյց կուտայ պատկերը:

Դանակներն ու պասառափաղները մաքրելու եւ փայլեցնելու մեքենայ. — Ինչպէս կ'երեւայ պատկերին կէտկիտուած մասերէն, դանակին շեղքը կը մտցուի մեքենային մէջ, զոր պէտք է հակառակ կողմը դարձնել, մէջը գտնուած թաղիքները չկտրելու հա-



մար: Թաղիքները փոխելու կամ մաքրելու համար պէտք է պտուտակն ուժով սեղմել եւ լծակը վերցնել որպէս զի թաղիքներն իրարմէ բացութիւն ունենալով, կարելի ըլլայ դուրս քաշել: Մաքրելու յատուկ փոշին կը դրուի աջ անիւին ետեւի թաղիքէ տուփին մէջ, այնպէս որ շարժման մէջ եղած թաղիքներն իրարու հետ կը շփուին: Մեքենան կը կշռէ 4 քիլօ, եւ շատ օգտակար է տուններու, պանդոկներու, ճաշարաններու համար:



ԴԱՍԸՆԹԱՑՔ ԱՌԵՒՑՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՏՈՒԹԵԱՆ

ԱՒԱՆԴ ԵՒ ՄԹԵՐԱՆՈՑ

Աւանդառու պահանջատէրի իրաւունքները. — Երբ պարտքը վճարուած չէ օրին, պահանջատէրը կրնայ աւանդը ծախել, իր առնելիքը գանձելու համար: Աւանդը ծախելէ առաջ, պահան-

Նստէրը զեկոյց մը պէտք է ընէ պարտատէրին և այդ զեկոյցէն ութ օր ետքը կրնայ աւանդ դրուած առարկաները աճուրդով ծախել տալ միջնորդի մը ձեռամբ եթէ ապրանք են և փոխանակագրի միջնորդի մը ձեռամբ՝ եթէ արժեթուղթեր են, եթէ աւանդ դրուած առարկաները փոխանակագրեր կամ մուրհակներ են, աւանդառու պահանջատէրը կրնայ զանոնք գանձել: Պահանջատէրին արգիլուած է աւանդ առնել առանց նշանակուած ձեւակերպութիւններու, ապա թէ ոչ չի կրնար ծախել աւանդը, եթէ պարտքը չհատուցուի:

Ընդհանուր մքերանոցներ. — Ընդհանուր մքերանոցները կառավարութեան արտօնութեամբ բացուած հաստատութիւններ են, որոնք իբր աւանդ կ'ընդունին ապրանքներ, նախնական նիւթեր են: Ընդհանուր մքերանոցներն աւանդատուին կը յանձնեն աւանդին գոյութիւնն հաստատող թուղթեր որոնք կրնան փոխանցուիլ, աւանդ դրուիլ կամ ծախուիլ, առանց հարկ մնալու որ ապրանքը դուրս ելնէ մքերանոցէն, և այս կերպով տեղափոխութեան ծախքերն ու անպատեհութիւնները կը վերնան: Բայտարենք այս կերպ գործառնութեանց մեքենականութիւնը:

Ընդունագիր (récépissé) եւ արժեգիր (warrant). — Ապրանքին տէրը, ընդհանուր մքերանոցի մը յանձնած իր ապրանքին փոխարէն կ'ստանայ երկու թուղթ, ընդունագիր և արժեգիր, որոնց մէջ գրուած են աւանդատուին անունը, արհեստը, բնակարանը, ապրանքին տեսակը, ինչպէս նաև կարեւոր ծանօթութիւններ ինքնութիւնն հաստատելու և արժեքն որոշելու համար:

Փոխանցում ընդունագրի եւ արժեգրի. — Այս երկու թուղթեր կրնան միասին կամ առանձին փոխանցուիլ, ինչպէս որ կ'ուզուի: Եթէ աւանդատուն կ'ուզէ փոխ դրամ առնել ապրանքին վրայ, արժեգիրը կը յանձնէ փոխատուին, թուղթին ետեւը մասնաւոր յիշատակութիւն մը ընելով: Այս փոխանցումով, փոխատուն իրաւունք կ'ունենայ ապրանքին վրայ, որ պարտքին վճարման յատկացուած կ'ըլլայ: Եթէ աւանդատուն կ'ուզէ իր ապրանքը ծախել, այն ատեն ընդունագիրն ու արժեգիրը կը փոխանցէ գնողին: Իսկ երբ ապրանքն արդէն գրաւի դրուած է և արժեգիրը փոխատուին յանձնուած, աւանդատուն ընդունագիրը կը յանձնէ գնողին: Ընդունագրին և արժեգրին կամ միայն ընդունագրին փոխանցումը հաւասար է ապրանքին վաճառման: Գործողութիւնը կրնայ կրկնուիլ: Ընդունագիրը կամ արժեգիրն ի ձեռին ունեցողը կրնայ իր կարգին փոխանցել զայն ուրիշի մը, և այսպէս յաջորդական փոխանցումներով, ապրանքը, ընդունագրի կամ արժեգրի ձեռին տակ, կրնայ շրջաբերիլ, ծախուիլ կամ գրաւի տրուիլ զանազան անձերու:

Ընդունագրին կամ արժեգրին փոխանցման ձևերը. — Ընդունագրին կամ արժեգրին և ընդունագրին փոխանցման ձևակերպութեան համար պահանջուած էական պայմաններն են թուականն և թուղթը փոխանցողին ստորագրութիւնը: Արժեգրին, ընդունագրէն անջատարար, փոխանցումը, թուականէն և ստորագրութենէն զատ, պէտք է կարգ մը յիշատակութիւններ պարունակէ ապրանքով երաշխաւորուած պարտքին վերաբերեալ: Ասկից զատ, արժեգրին առաջին իրաւաւուն, այն որու փոխանցած է աւանդատուն, պարտաւոր է այս փոխանցումն արձանագրել տալ ընդհանուր մթերանոցին տետրակներուն մէջ:

Ընդունագրին եւ արժեգրին կամ միայն ընդունագրին սիրոյ իրաւունքները. — Սահմանելէ ետքը նկարագրին այն գործողութեանց որոնք տեղի կ'ունենան ընդհանուր մթերանոցներու յանձնած թուղթերուն միջոցաւ, ինչպէս նաեւ այդ թուղթերուն փոխանցման ձևակերպութիւնները, պէտք է ճշտել հիմա թէ ընդունագրին և արժեգրէն տէրն ինչ իրաւունքներ ունի: Այն որ կանոնաւոր փոխանցումով ի ձեռին ունի ընդունագրին եւ արժեգրը, ապրանքին տէրն է, որովհետեւ ընդունագրին և արժեգրին փոխանցումն հաւասար է վաճառումի: Կրնայ ուրեմն ընդհանուր մթերանոցն երթալ և ապրանքն առնել ընդունագրին և արժեգրին յանձնելով, երբ ընդունագրը միայն փոխանցուած է առանց արժեգրի, վասն զի վաճառման միջոցին ապրանքն արդէն գրաւի դրուած էր արժեգրին փոխանցումով, ընդունագրի ի ձեռին ունեցողը այս թուղթն իրեն փոխանցողէն տւելի իրաւունք մը չի վայելեր: Արժեգրին տիրոջ պէտք է վրձարէ ապրանքին վրայ փոխ տրուած գումարը: Միայն ընդունագրին ի ձեռին ունեցողը չի կրնար ուրեմն ապրանքն առնել ընդհանուր մթերանոցէն բայց եթէ փոխ առնուած գումարը վճարելով, Կարելի է որ երաշխաւորուած պարտքին պայմանաժամն եկած չըլլայ այն պահուն ուր ընդունագրին տէրը կ'ուզէ ապրանքն առնել: Ստիպուած չէ պայմանաժամին սպասել անպատճառ: Եթէ արժեգրին տէրը չի ճանչնար, կամ եթէ ժամանակէն առաջ վճարման պայմաններուն վրայ չի համաձայնիր, կրնայ ընդհանուր մթերանոցի վարչութեան յանձնել երաշխաւորուած գումարը: Այս կերպով իրաւունք կ'ունենայ ապրանքն առնելու:

Արժեգրին սիրոյ իրաւունքները. — Գալով արժեգրին տիրոջ, ապրանքին վրայ գրաւի իրաւունք մ'ունի, եթէ պարտքը պայմանօրին չվճարուի փոխառուին կողմէ, արժեգրին տէրը բռնողութեամբ ճշտել կուտայ վճարման մերժութիւն և ութ օր ետքը, կրնայ ծախել տալ ապրանքը: Վաճառման գինէն կ'առնէ իր դրամը,

միւս բոլոր պահանջատէրներէն նախապատուութիւն ունենալով, բայց պարտաւոր է այն գումարէն զեղչել մաքսատուրքը, միջնորդին տրուելիք վարձքն և մթերանոցի ծախքը: Եթէ ապրանքին վաճառումէն գոյացած դրամը չբաւէ արժէգրին տիրոջ պահանջքը գոցելու, տարբերութիւնը կը պահանջուի փոխառուէն և արժէգրին յաջորդական փոխանցողներէն: Արժէգրին տէրը փոխանցողներուն դէմ դատ բանալու իրաւունքը կը կորսնցնէ եթէ բողոքագրոյն ամիս մը ետքը ծախած չըլլայ ապրանքը: Նոյնպէս կը կորսնցնէ իր իրաւունքն եթէ վճարման համար նշանակած չըլլայ որոշ պայմանաժամ մը, որ սովորաբար 15 օր է և կ'սկսի ապրանքներուն վաճառման օրէն: Պէտք է գիտել որ իրաւունքի այս կորուստը միջանկեալ փոխանցողներուն համար է, և արժէգրին տէրը, նոյն իսկ վանցառութեան պարագային, միշտ իրաւունք ունի առաջին փոխառուին դէմ դատ բանալու: Այս բացատրութիւններէն կ'երեւի որ արժէգիրը առեւտրական թուղթի մը նկարագիրն ունի և այս տեսակէտով կը նմանի ի հրամանի տոմսակի մը, բայց մասնաւոր երաշխաւորութիւն մը կը ներկայացնէ որ առաջ կուգայ ապրանքին գրաւադրութենէն: Արժէգիրը կրնայ, իբր առեւտրական թուղթ, ընդունուիլ և զեղչուիլ պանքաներու կողմէ: Պանք տը ֆրանս, որ երեք ստորագրութիւն կրող թուղթերը միայն կրնայ զեղչել, արտօնուած է ընդունիլ միայն երկու ստորագրութիւն կրող արժէգիրները, որովհետեւ մասնաւոր կերպով երաշխաւորուած են անոնք:

Կորուստ ընդունագրի կամ արժէգրի.— Ընդունագիրը կորսնցնողը կրնայ երկրորդ օրինակ մը ձեռք բերել կարգ մը պայմաններ լրացնելով: Պէտք է ապացուցանէ որ ստուգիւ տէր էր կորսուած ընդունագրին: Այս ապացոյցը սովորաբար կը մատակարարուի առեւտրական տետրակներու միջոցաւ: Յետոյ հրամանագիր մը պէտք է ձեռք բերէ առեւտրական դատարանի նախագահին կողմէ, երկրորդ օրինակին յանձնումն արտօնող: Վերջապէս երաշխաւորութիւն մը պէտք է տայ գումար մը աւանդ ձգելով կամ պատուաւոր մէկը ցոյց տալով իբր երաշխաւոր: Արժէգրին տէրն ալ միեւնոյն պայմանները պէտք է լրացնէ երաշխաւորուած պահանջքին վճարումն ապահովելու համար:

Ապրանքներու հրապարակային վաճառման վրայ ընդհանուր ծանօթութիւններ. — Ընդհանուր մթերանոցներու մէջ աւանդ դրուած ապրանքներու մասին այս տրամադրութեանց ընդհանուր նպատակը սա է որ ապրանքին տէրը միշտ և առանց դրժուարութեան կարենայ այդ ապրանքին ներկայացուցած դրամագլուխը գործածել իր յանձնառութիւններն յարգելու համար:

Այս պատճառաւ է որ վերցած են այն արգելքներն որք 1858էն առաջ կային ապրանքներու հրապարակային վաճառմանց համար։ Մինչեւ 1858, այս վաճառումներ բացառիկ կերպով կ'արտօնուէին և առեւտրական դատարանի արտօնութեամբ միայն կ'ըլլային։ Վաճառման այս եղանակը սակայն կրկին առաւելութիւն ունի։ Ծախողները կրնան նպաստաւոր պայմաններ վայելել, հրապարակային վաճառման կանչուած գնողներու մրցման հետեւանքով։ Գնողներն ալ կ'ազատին միջանկեալ ծախքերէ որք ապրանքին գինն աւելցնելու կը ծառայեն։ Այս առաւելութեանց համար է որ 1858ի օրէնքը թոյլատրեց որ առանց առեւտրական դատարանի արտօնութեան հրապարակաւ ծախուին ինչ ինչ ապրանքներ, զոր որինակ սննդեղէն, նախնական նիւթեր, իւղ, գինի, հանքածուխ, շինութեան փայտ, եւայլն։ Այս վաճառումներ տեղի կ'ունենան միջնորդներու ձեռքով և արտօնեալ մասնաւոր վայրերու մէջ։

Ընդհանուր մթերանոց մը կամ հրապարակային վաճառմանց յատուկ սրահ մը բանալու արտօնութեան ձեւակերպութիւնք եւ շահագործողներու պարտաւորութիւնք. — Անոնք որ ընդհանուր մթերանոցներ և հրապարակային վաճառմանց յատուկ սրահներ կը շահագործեն, ինչ ինչ պարտաւորութիւններու ենթակայ են։ Այս հաստատութիւնք մասնաւոր հրամանագրով միայն կրնան բացուիլ։ Խնդրագիրը կը ներկայացուի առեւտրական նախարարութեան։ Խնդրարկուն պարտաւոր է դրամական երաշխաւորութիւն մը տալ, որուն գումարը կը սահմանուի արտօնութեան հրամանագրով։ Շահագործողք պատասխանատու են իրենց վստահուած ապրանքներուն պահպանման և պարտաւոր են իրենց մթերանոցները կամ վաճառման սրահները դնել փափաքողներու տրամադրութեան տակ։ Վարձքի սակացոյցն և կանոնագիրը կանխաւ պատրաստուելով, գործադրութեան դրուելէ առաջ կը ներկայացուին Առեւտրական Սենեկին և Առեւտրական դատարանին։ Վերջապէս այս հաստատութիւնք իշխանութեանց յարատեւ հրահրութեան տակ կը գտնուին։

ՀԱՅՈՒԱԾ Պ.

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ (Commission)

Յանձնակատարին մասնաւոր նկարագիրը. — Յանձնակատարը միջնորդ մ'է որ առեւտրական գործողութիւն մը կ'ընէ ուրիշ հաշուոյն, բայց իր անուամբ։ Այն՝ որու հաշուոյն կը կատարուի

գործողութիւնը, կ'ըսուի յանձնարար (commettant): Յանձնակատարին մասնաւոր նկարագիրն ան է որ թէեւ յանձնարարին հաշուոյն կը գործէ, բայց ինք ալ անձնապէս մաս ունի և վաճառականին հանդէպ կը գտնուի այն միեւնոյն կացութեան մէջ ուր պիտի գտնուէր եթէ իր անձնական չահուն համար գործէր:

Յանձնարարութեան եւ հրամանի տարբերութիւնը. — Յանձնատէրը (mandataire) ինչպէս յանձնակատարը (commissionnaire) ուրիշ մը հաշուոյն կը գործէ, բայց յանձնատէրը յանձնատուին (mandant) անուամբ կը գործէ և անձնապէս պատասխանատու չէ, մինչ յանձնակատարն իր անուամբ կը գործէ և անձնապէս պատասխանատու է: Օրինակով մը հասկցնենք տարբերութիւնը. — Հրաման կուտամ Յովհաննէսին սաչափ ապրանք գնել ինձ համար: Յովհաննէս հրամանը կը կատարէ և իմ հաշուոյս կը գնէ: Գործողութիւնն աւարտելէ ետքը, ես պատասխանատու եմ: Յովհաննէսը գործին մէջէն կ'ելնէ և պարտաւոր չէ արժէքը վճարել: Ենթադրենք որ Յովհաննէս, փոխանակ յանձնատէր ըլլալու, յանձնակատար ըլլայ: Կը ներկայանայ ծախողին և առանց յանձնարարին անունը տալու, իր անուամբ կը գնէ ապրանքները: Ինք է որ իբրեւ գնող կը ճանչցուի եւ հետեւապէս պատասխանատու է վճարման մասին: Միայն թէ պարտաւոր է այդ գործողութեան արդիւնքն հաղորդել յանձնարարին, քանի որ իր հաշուոյն համար ըրած է:

Յանձնարարութեան առաւելութիւնները. — Վաճառականութիւնը մեծ օգուտ կը քաղէ այս ձեւ գործառնութենէն: Այն որ յանձնակատարին հետ կը գործէ, գիտնալով որ անիկա միայն պատասխանատու է, փոյթ չընել որ յանձնարարին դրամական կարողութեան վրայ տեղեկութիւն առնել, որ յաճախ երկար ու դժուարին կ'ըլլայ: Այս կերպով ապահովութիւն մը կը տիրէ գործառնութեանց մէջ, Յանձնակատարին միջամտութիւնը սա առաւելութիւնն ալ ունի որ յանձնարարը չի ճանչցուիր եւ գործողութիւնը գաղտնի կը պահուի այս կերպով:

Յանձնարարութեան զանազան կիրառումները. — Յանձնակատարը կրնայ ամէն տեսակ առեւտրական գործառնութիւն ընել: Կրնայ ծախել, գնել, փոխանակագիր քաշել, եւայլն: Ի վերջոյ պիտի տեսնենք թէ ի՞նչ մասնաւոր օրէնքներ կան փոխանակագիր քաշելու եւայլն համար: Առ այժմ պիտի ուսումնասիրենք յանձնարարութեան ընդհանուր օրէնքները:

Յանձնակատարից պարսկանութիւնները. — Առեւտրական ի՞նչ գործառնութիւն ալ ընէ, յանձնակատարը ինչ ինչ պարտականու-

թիւներն ունի հանդէպ յանձնարարին: Աւասիկ գլխաւորները. — երբ յանձնարարութիւնն ընդունած է, պարտաւոր է գործադրել պայն, ճշտիւ հետեւելով իրեն տրուած հրահանգներուն: Յանձնակատարը պարտաւոր է ամէն օգտակար տեղեկութիւն տալ յանձնարարին, ծանուցանել եւ նոր հրահանգի սպասել երբ չի կրնար գործադրել յանձնարարութիւնը եւ անմիջապէս իմաց տալ երբ հրահանգները գործադրուեցան: Վերջապէս յանձնակատարը պարտաւոր է իրեն յանձնուած ապրանքներուն եւ գումարներուն հաշիւը տալ:

Յանձնակատար — վաճառող. — երբ յանձնակատարը պաշտօն ստանձնած է ծախել, պարտաւոր է ընդունիլ եւ պահել իրեն զրկուած ապրանքները, եւ ամենամեծ խնամքով հսկել որ չաւրուին: Ծախած ատեն պարտաւոր է նկատի առնել ցոյց տրուած գիներն ու պայմանները: Այսպէս, չի կրնար որոշեալ գինէն վար ծախել, Պէտք է կանխիկ ծախէ, եթէ սակայն արտօնուած չէ ապառիկ ծախել, եւ այս պարագային մէջ յանձնարարին որոշած կամ առեւտրական սովորութեան արտօնած պայմանաժամէն աւելի միջոց չտալ:

Տիւրքուառ. — երբ յանձնակատարը յանձնարարին որոշած պայմանաժամերով ծախած է, պատասխանատու չէ եթէ՝ գնողը պայմանաժամին չհատուցանէ: Կորուստն յանձնարարին կը պատկանի: Բայց յաճախ կը պատահի որ յաւելուածական յանձնարարող չէքի մը փոխարէն, յանձնակատարը կ'ապահովէ գնողներէ գալիք վնասը, եւ ինք կը վճարէ եթէ գնողը թերանայ իր յանձնառութեան մէջ: Այս մասնաւոր պայմանադրութիւնը կը կոչուի տիւրքուառ, որ իտալերէն տիւրքուառ բառերէն շինուած է եւ կը նշանակէ վստահութիւն ունենալ:

Յանձնակատար — գնող. — Յանձնակատար գնողը պարտի համակերպիլ ապրանքներու գնոյն, տեսակին ու քանակին մասին իրեն տրուած հրահանգներուն: Յանձնարարողը կրնայ մերժել իր հրահանգներուն համաձայն չգնուած ապրանքներն եւ յանձնակատարին վրայ թողուլ զանոնք: Իսոնք են յանձնակատարին գըլխաւոր պարտականութիւններն հանդէպ յանձնարարին: Տեսանք որ երրորդներու հանդէպ յանձնակատարը պարտաւոր է անձնապէս: Եթէ ծախած է, պարտաւոր է ապրանքն յանձնել գնողին եւ եթէ գնած է՝ արժէքը վճարել:

Յանձնարարին պարտաւորութիւնները. — Յանձնարարը կրկին պարտաւորութիւն ունի հանդէպ յանձնակատարին: Նախ պարտաւոր է վճարել այն ծախքերը զորս անիկա ըրած է յանձնարարութիւնը կատարելու համար եւ այն գումարները՝ զորս

տուած է : Այսպէս, երբ յանձնակատարը ապրանքի մը արժէքը վճարած է, իրաւունք ունի պահանջել յանձնարարէն, որ նոյնպէս պարտաւոր է հատուցանել այն փաստները զոր յանձնարարութեան գործադրումը պատճառած է յանձնակատարին, կը բաւէ որ անիկա խոհեմութեամբ գործած ըլլայ : Յանձնարարը պարտաւորութիւն մը չունի հանդէպ երրորդներու որ գործառնութիւն ունեցած են յանձնակատարին հետ : Ինք պայման դրած չէ անոնց հետ եւ յանձնակատարին հետ միայն յարաբերութիւն ունի :

Յանձնարարողչէք. — Յանձնարարին երկրորդ պարտաւորութիւնն է յանձնարարողչէք մը վճարել, որ յանձնարարութեան պայմանադրութեան էութիւնն է : Յանձնակատարը, որ իրեն տրհետ ըրած է այս կարգի գործառնութիւններ ընել, իրաւունք ունի վարձք մը ստանալու : Այս կէտին մէջ ալ յանձնարարութիւնը կը տարբերի հրամանէն, զոր կատարողն ընդհանրապէս վարձք չառնէր բայց եթէ բացառիկ պարագաներու մէջ : Յանձնարարողչէքը կ'որոշուի յանձնարարին եւ յանձնակատարին միջեւ պայմանադրութեամբ մը, կամ ըստ սովորութեան : Այս յանձնարարողչէքն հարկւրին մէկ, երկու կամ հինգ է, կատարուած գործողութեան ընտելեան համաձայն : Յանձնարարողչէքը կրկին է երբ տրհետ ըլլայ, այսինքն երբ յանձնակատարը յանձնարարին հանդէպ երաշխաւորէ գործ ըրած մարդոց հատուցանելու կարողութիւնը : Յանձնարարողչէքը կը վճարուի եթէ նոյն իսկ գործը չյաջողի : Այսու հանդերձ, եթէ գործողութեան անյաջողութիւնը յանձնակատարին մէկ թերութենէն առաջ եկած ըլլայ, անիկա կրնայ դատապարտուիլ յանձնարարին վճարել հատուցում մը որ կը պակսեցնէ կամ բոլորովին կը ջնջէ յանձնակատարին առնելիք վարձքը :

Յանձնակատարին առանձնացնողհոլմը. — Յանձնակատարը, իր վարձքը գանձելու համար, մասնաւոր երաշխաւորութիւն մը ունի, — ապրանքներու գնոյն վրայ առանձնաշնորհում մը, որով յանձնարարին միւս պահանջատէրներէն առաջ իրաւունք ունի իր վարձքը առնելու : Յանձնակատարին տրուած այս երաշխաւորութեան գլխաւոր նպատակն է վարկ տալ վաճառականներուն : Արդարեւ յանձնակատարը, որուն ապրանքներ ղրկուած են ծախելու համար, առանձնաշնորհին իրեն տրուած ապահովութեամբ, պիտի կրնայ այն ապրանքներուն վրայ կանխավճար ընել յանձնարարին, ծախելէ եւ դրամն առնելէ առաջ : Յանձնակարն օրէնքով կը վայելէ այս առանձնաշնորհումը, եւ հարկ չկայ որ մասնաւոր պայմանադրութիւն ըլլայ : Նմանօրինակ առանձնաշնորհում մը չի կրնար հաստատուիլ յանձնակատարէ զատ ուրիշի

մը հնամար, բայց եթէ մասնաւոր պայմանագրութեամբ, ապրանքներն իբրեւ գրաւ տալով:

Այս առանձնաւորումին պայմանները. — Որպէս զի առանձնաշնորհը գոյութիւն ունենայ յօգուտ յանձնակատարին, պէտք է որ ապրանքներն անոր տրամադրութեան տակ ըլլան եւ գտնուին անոր պատկանող միջերանոցի մը մէջ կամ մաքսատան միջերանոցին մէջ: Նոյն իսկ կը բաւէ որ ապրանքները ղրկուած ըլլան անոր, թէեւ տակաւին ձեռքն հասած չըլլան, եթէ արդարացնէ որ առաքումն եղած է բեռնագրով:

Առանձնաւորումամբ երաշխաւորուած պահանջներ. — Առանձնաշնորհը յանձնակատարին կ'երաշխաւորէ յանձնարարին ունեցած պահանջքին վճարումը, ինչպէս յանձնարարին ըրած կանխավճարները, անոր փոխ տուած կամ անոր հաշուոյն վճարած գումարները, յանձնարարութեան կատարման առթիւ եղած ծախքերը և վերջապէս իր առնելիք վարձքը: Երբ յանձնակատարը ծախսէ ապրանքները, այս զանազան գումարները կ'առնէ վաճառման արդիւնքէն, ատոնց հոգ ընելու յանձնարարին միւս պահանջատէրները:

Սակարանի Կանոնագրութիւնը

Յօդ. Ա. — Սակարանը տեղ մ'է, ուր կը հաւաքուին վաճառականներ, պանքէրներ, յանձնակատարներ, գնորդներ, փոքր սեղանաւորներ, ապրանքային միջնորդներ, նաւապետներ, ապահովագրական գործակալներ, նուաւտէրներ, չոգենաւային ընկերութեանց գործակալներ և այն ամէն անհատներ որք ուղղակի կամ ուրիշի ձեռքով վաճառականութեան, արժէթուղթերու և ուրիշ սեղանաւորական գործերով կ'գրաւին:

Յօդ. Բ. — Սակարանները կառավարութեան կը պատկանին և Առեւտրական նախարարութեան իրաւասութեան ենթակայ են: Առեւտրական Սենեակ ունեցող այն քաղաքներու մէջ, որք յարմար և վաճառաշահ են, մէկ մէկ սակարաններ պիտի բացուին:

Յօդ. Գ. — Կ. Պոլսոյ սակարանին կը հսկէ ուղղակի Առեւտրական նախարարութեան ընտրուած Գովիսէր մը, իսկ վիլայէթներու սակարանները կուսակալին կամ կառավարչին կողմէ

ընտրուած և Առեւտրական նախարարութենէն վաւերացուած Բոմբէյի մը վարչութեան տակ կը գտնուին :

Յօդ. Դ. — Սակարանի մէջ կանխիկ կամ խոստումով եղած գործառնութիւնք հետեւեալներն են . — 1. Գնում և վաճառում ամէն տեսակ արմտեաց և ապրանաց , 2. — Գնում և վաճառում ամէն տեսակ իրեղէններու և մետաղադրամներու , 3. — Ապահովագրութիւն նաւերու , 4. — Նաւողչէք , 5. — Փոխադրութիւն ապրանաց և իրեղէններու , թէ՛ ծովի և թէ՛ ցամաքի ճամբով . 6. — Փոխանակագրերու և յանձնարարութեանց մուրհակներու փոխանցում . 7. — Գնում և վաճառում Օսմ. կառավարութեան ընդհանուր արժէթուղթերուն եւ կառավարական պաշտօնարաններէն չըջարեութեան հանուած և գնումն ու վաճառումն արտօնուած ամէն տեսակ սեւեռներու , տնանուն ընկերութեանց այն բաժնեթուղթերուն , որք Սակարանի մէջ մտցուած և արձանագրուած են և այն ամէն տեսակ քոնսլիտէներու , որք Օսմ. կառավարութեան արտօնութեամբ Սակարանին մէջ մտցուած և արձանագրուած են :

Յօդ. Ե. — Սակարանն ամէն օր , որոշեալ ժամուն պիտի բացուի , դադարի օրերէն զատ : Սակարանին յատուկ շէնքին մէկ ճիւղը պիտի յատկանայ առեւտրական և արհեստական ապրանքներու և իրեղէններու գործառնութեանց և միւս ճիւղը՝ քոնսլիտէի և այն բաժնեթուղթերուն , որոց գնումն ու վաճառումը կարելի է , ըստ Դ. յօդուածի :

Յօդ. Զ. — Որոշեալ ժամերէն առաջ կամ ետքը քոնսլիտէի կամ ուրիշ առուտորի վերաբերեալ ո եւ է գործառնութիւն արգելեալ է Սակարանին մէջ :

Յօդ. Է. — Դ. Յօդուածի համաձայն , Սակարանի մէջ կատարուելիք գործառնութեանց օրուան գինն ամէն օր յատուկ թուղթի վրայ պիտի արձանագրուի և Սակարանին փակուելէն առաջ սինսիներու միջոցաւ պիտի ծանուցուի :

Յօդ. Ը. — Վաճառականական , սեղանաւորական և քոնսլիտէի վրայ գործառնութիւններ կատարելու համար , Սակարանէն զատ ուրիշ տեղ հաւաքուիլն արգելուած է : Այս տեսակ հաւաքումներ թոյլատրող կամ արտօնողներէն առաջին անգամ 20 Օսմ. ոսկի , իսկ կրկնութեան պարագային կրկին տուգանք պիտի առնուի :

Յօդ. Թ. — Վաճառականութեան , սեղանաւորութեան , քոնսլիտէի եւն . վերաբերեալ գործառնութիւններ կատարելու մասք Սակարանին չըջակաները և կամ ուրիշ տեղեր , փողոցներու մէջ հաւաքուիլը բացարձակապէս արգելուած է :

Յօդ. Ժ. — Հասարակութեան արգիլուած է Սակարան մըտնել, Սակարանի յատուկ գործառնութիւններով զբաղող յաճախորդները միայն իրաւունք և արտօնութիւն ունին մտնելու:

Յօդ. ԺԱ. — Յաճախորդներուն թիւը սահմանափակ չէ: Արժէթուղթերու, մուրհակներու եւն. յատուկ Սակարանին յաճախորդներուն անուններն արձանագրելու համար յատուկ տետրակ մը պիտի ըլլայ, ինչպէս նաեւ ուրիշ տետրակ մը՝ առեւտրական և արհեստական ապրանքներու և իրեղէններու Սակարանին յաճախորդաց համար: Անձ մը, եթէ ուզէ, պիտի կրնայ երկու տետրակներուն մէջ ալ արձանագրել տալ իր անունը: Սակարանի քովսէրին, քարտուղարներուն և սպասաւորներու ամսականին և սակարանի միւս ծախուց համար յաճախորդներուն տալիք տարեկան գումարն որոշուելով Առեւտրական նախարարութեան պիտի ծանուցուի:

Յօդ. ԺԲ. — Յաճախորդներուն վճարելիք տարեկան գումարն ամէն տարւոյ սկիզբը կանխիկ պիտի վճարուի:

Յօդ. ԺԳ. — Առանց ազգի եւ Հպատակութեան խտրութեան, իրենց խնդրանք սակարանի յաճախորդ գրուելու իրաւունք ունին նախ՝ այն ամէն վաճառականներ, սեղանաւորներ, նաւապետներ, ապահովագրողներ, նաւատէրեր, գնորդներ եւ միջնորդներ, որք սակարանին գտնուած քաղաքին մէջ կը բնակին մշտապէս կամ առժամապէս եւ կամ բնակելու յանձնառու եղած են, և Բ. այն ամէն անձեր որք թէեւ վերոյիշեալ դասուկարգերէն միոյն չեն պատկանիր, բայց այն քաղաքին մէջ բնակելով կրնան սակարանի յաճախորդներէն երկու հոգիի ստորագրութեամբ վկայագիր մը ցոյց տալ իրենց պատուաւոր, վստահելի եւ բարոյականի տէր ըլլալնին հաստատող: Անոնք որ մըտապէս կամ առժամապէս չեն բնակիր այն քաղաքին մէջ կամ առաջները բնակելով յետոյ տեղ փոխած են, յաճախորդաց ցանկէն պիտի ջնջուին:

Յօդ. ԺԴ. — Անուանարկ պատժի դատաւարտողներուն, սնանկներուն, կամ սնանկանալէ ետք իրենց պատիւը չվերահաստատողներուն բացարձակապէս արգիլուած է սակարան մտնել:

Յօդ. ԺԵ. — Սակարանի յաճախորդներէն անոնք որ կ'ուզեն գնումներով եւ միջնորդի գործողութիւններով զբաղիլ, պարտաւոր են իրենց անունն յատուկ տետրակին մէջ արձանագրել տալ, ինչ տեսակ միջնորդութեամբ զբաղելնին յայտնել և բացայայտ կերպով յանձնառու ըլլալ որ իրենց հաշուոյն ամէն տեսակ գործառնութիւններ կատարելէ հետի պիտի կենան: Յանձնառութիւննին չկատարողներուն անունները տետրակէն պիտի ջնջուին:

Այս կարգի անձերը գնորդի և միջնորդի տետրակներէն միոյն մէջ նորէն կրնան արձանագրուիլ եթէ մինչեւ այն թուականն արձանագրուած և նոյնատեսակ գործառնութիւններով զբաղող միջնորդներուն առնուազն երկու երրորդն հաւանին: Միայն թէ այն ուր միջնորդներու տետրակէն ջնջուած է, առնուազն երեք տարի ետքը միայն կրնայ նորէն ընդունուիլ միջնորդներուն կարգը:

Յօդ. ԺԶ. — Վարչական Ժողով մը կը վարէ սակարանի գործողութիւնները: ԺԱ. յօդուածին մէջ նշանակուած երկու ճիւղերուն յաճախորդներէն բաղկացած Ընդհանուր Ժողով մը ամէն տարի Սակարանին մէջ իրեն յատուկ տեղը կը կը գումարուի և իր մէջէն բացարձակ առաւելութեամբ 7 հոգի կ'ընտրէ իբր անդամ Վարչական Ժողովոյ: Անդամներն առնուազն 25 տարու պէտք է ըլլան: Պաշտօնավարութիւնին տարի մը կը տեւէ եւ ձրի է: Ընտրութիւնը տեղի պիտի ունենայ Սակարանի նախարարութեան կամ անոր կողմէ կարգուած պաշտօնէին նախագահութեան տակ: Ընդհանուր Ժողովին ներկայ իւրաքանչիւր ընտրող այս կանոնագրին պահանջած հտնգամանքն ունեցող յաճախորդներէն 7 հոգիին մէկ ցանկը պիտի տայ գաղտնի քուէարկութեամբ: Այս կերպով ամէնէն աւելի քուէ ստացող 7 անձերը Վարչական Ժողովոյ անդամ պիտի կարգուին:

Յօդ. ԺԷ. — Վարչական Ժողովոյ իւրաքանչիւր ճիւղն իր անդամոց մէջէն պիտի ընտրէ նախագահ մը և գանձապահ մը: Խնդրոյ մը վրայ որոշում տալու համար անդամներէն առնուազն 4 հոգին ներկայ պէտք է ըլլան: Խորհրդակցութեան առարկայ եղած խնդիրներու մասին մեծամասնութեամբ որոշում պիտի տրուի: Համեմատականի մնացած ատեն, նախագահին կարծիքն ունեցող կողմը մեծամասնութիւն չափած պիտի համարուի:

Յօդ. ԺԸ. — Վարչական Ժողովն իւրաքանչիւր ճիւղին ներքին կարգապահութիւնը, գնորդներուն եւ միջնորդներուն իրաւունքներն ու պարտականութիւնները, յաճախորդներուն հետ և իրենց միջեւ անոնց ունենալիք յարաբերութիւնները, և սակարանին գործառնութիւններուն ընթացքը ճշտող կանոնագիր մը պատրաստելու արտօնութիւն ունի: Այս կանոնագիր Օսմ. կառավարութեան վաւերացման պիտի ենթարկուի և պաշտօնապէս ընդունուելէն ետքը Սակարանին մէջ պիտի կախուի: Յաճախորդներն այս կանոններուն հնազանդելու պարտաւոր են: Վարչական Ժողովն յաճախորդներուն փոխանորդն ըլլալով պարտաւոր է սակարանին բարոյական և նիւթական շահերուն հոգ տանիլ, կանոնագրութեանց ճշիւ գործադրութեան հսկել, կանոնի հակառակ

տրարքներն արգիլել և սակարանի գործառնութեանց առթիւ գնորդներու, միջնորդներու և յաճախորդներու միջեւ յառաջ եկած վէճերու մասին ըստ օրինի տալիք որոշումները սակարանի քօմիսէրին հաղորդել ի գործադրութիւն :

Յօդ. ԺԹ. — Սակարանի քօմիսէրները սակարանին և առեւտրական նախարարութեան կամ տեղական կառավարութեան միջեւ պաշտօնական միջնորդներ են : Օսմ. կառավարութեան կողմէ սակարանին եւ սակարանին կողմէ Օսմ. կառավարութեան ըլլալիք զեկուցումները քօմիսէրին միջոցաւ կը կատարուին : Քօմիսէրը պիտի ստորագրէ և վաւերացնէ սակարանին ճիւղերուն կողմէ հրատարակուելիք յայտարարութիւններն և նախապէս ինք պիտի տեսնէ սակարանէն տրուելիք ամէն թուղթ, գիներու ցուցակ, վկայագիր : Քօմիսէրին վաւերացումն և յատուկ կնիքը չկրող թուղթերը վաւերական չեն նկատուիր : Քօմիսէրը թէ՛ սակարանին մէջ և թէ՛ դուրսը ընդհանուր բարեկարգութեան պիտի հսկէ կանոնի հակառակ ընթացքի մէջ գտնուողներուն անունները պիտի արձանագրէ, ի հարկին վարչական ժողովոյ պիտի իմացնէ, եթէ պէտք ըլլայ ստիկանութեան ալ պիտի դիմէ և ըստ կանոնի վարչական ժողովոյ տալիք որոշումները պիտի գործադրէ :

Յօդ. Ի. — Օրինական պայմանաժամը լրացուցած վարչական ժողովոյ երկու ճիւղերն ամէն տարի քօմիսէրին նախագահութեան տակ գումարուելով այն տարուան ելմտացոյցը պիտի պատրաստեն և Պոլսոյ մէջ Առեւտրական նախարարութեան ու գաւառներու մէջ կուսակալին կամ կառավարչին պիտի յանձնեն : Նորընտիր վարչական ժողովը նախորդ տարւոյ ծախքերուն հասոյթներուն հաշիւը պիտի քննէ և իր քննութեան արդիւնքը տեղեկագրով մը քօմիսէրին պիտի հաղորդէ : Այս տեղեկագիր առեւտրական նախարարութեան կողմէ վաւերացուելէ ետք, պատճէնը սակարանին մէջ պիտի կախուի, որպէսզի ամէն ոք տեղեկանայ անոր տրամադրութեանց :

Յօդ. ԻԱ. — Զննուած են Տիւթուրի Գ. հատորին մէջ գրուած եւ 11 Շէվվալ տարի 90 և 19 Թըշրինի սանի տարի 89 թուակիր սակարանի կանոնադրութեան այն յօդուածներն որք այս կանոնադրին տրամադրութեանց հակառակ են :

Յօդ. ԻԲ. — Ներկայ կանոնադրին գործադրութեան պիտի հսկէ Առեւտրական նախարարութիւնը :



ՊԶՏԻԿ ՍԽԵԼՆԵՐ

75000 Անգլ. ոսկի հաւելոյ մեջ կորսուած

Պիտի ըսէք թէ կարելի՞ է այդ: — Լա՛ւ, կարգացէք անգամ մը, թերեւս համոզուիք: Արդարեւ եո իսկ կը թերահաւատիմ թէ ի՞նչպէս կրնայ 75000 ոսկի կորսուիլ հաշուելու մէջ կամ չհաշուելով: Արդեօք քանի՞ քանի վաճառատուններու գրագիրներ, կոտորակներ հաշույ մէջ չանցընելու սովորութիւն ունին: Հաշուոյ մէջ մէկ բէնսին $\frac{1}{8}$ ը երբ տեսնեն, զանց կ'ընեն. — Է՛հ, ի՞նչ կ'արժէ, կ'ըսեն, և այնպէս ալ չէ՞ մի: Բայց ահա օրինակ մը որ պիտի ցուցնէ անոր արժէքը եւ տարբերութիւնը: —

ՀԱՇՈՒԵՑՈՅՑԸ

ձիւսք

	Անգ. Շ. Բ.	Անգ. Շ. Բ.
67 եարտա կերպաս գին	$4\frac{3}{4}$ Բ = 1. 5. 5.	1. 6 $6\frac{1}{4}$
436 » » »	$4\frac{1}{8}$ Բ = 7. 9. 10.	7. 9 $10\frac{1}{2}$
66 » » »	$5\frac{1}{8}$ Բ = 1. 8. 10.	1. 8 $10\frac{1}{2}$
$1\frac{5}{8}$ » » »	10 շ. 6 Բ = 0. 14. 5.	0. 14 $5\frac{1}{4}$
	£ 10. 19. 7.	£ 10. 19 $8\frac{1}{2}$

Այս հաշուով ենթադրենք թէ իւրաքանչիւր հաշուեցոյցէ բէնս մը պակաս կը հաշուենք եւ սրով հետեւ շատ վաճառականներ (Անգլիոյ մէջ) օրը առնուազն հարիւր հաշուեցոյց կը գրեն, իւրաքանչիւր հաշուեցոյցէ մէկ բէնս պակաս՝ կ'ընէ օրը 8 շիլին, 4 բէնս: Եթէ տարւոյն 52 կիրակիները եւ 52 շաբաթի կէս օրերը, 26 օր, հանենք տարւոյն օրերէն, կ'ունենանք 283 գործի օր, որ օրական 8 շիլ. 4 բէնսէն կ'ընէ տարին 120 Անգլ. ոսկի: Ենթադրենք թէ վաճառատուն մը այս ընթացքով կը գործէ 25 տարիէ ի վեր. ի՞նչ փնասած կ'ըլլայ: — 2000 Անգլ. ոսկի: Եթէ մէկ վաճառատուն այսքան կը փնասէ, չափազանցութիւն է միթէ ըսել թէ քսան և հինգ վաճառատուն այս հաշուով 25 տարուան մէջ 75000 Անգլ. ոսկի կը կորսնցնեն:

Թարգմ. Անգլ. Ա. Գ.

ՏՆՏԵՍԱԳՓՏԱԿԱՆ ՆՕԹԵՐ

Նախորդ յօդուածով ըսինք թէ աշխատութիւնք այնքան կ'ըստորաբաժանուին որքան շատ կարելի ըլլայ աշխատողներն համախմբել ու արտադրութիւնները փոխանակել: Մեծ ու կեդրոն քաղաքներէ հեռու գիւղ մը, ուր շուկայ չկայ, գիւղացին իր սպառածէն աւելցած արտադրութիւնը դիւրաւ փոխանակելու միջոց չունի, հետեւաբար փոխանակ մի միայն մէկ տեսակ գործով պարապելու, կ'ստիպուի իր բոլոր պէտքերն ինք հոգալ եւ մշակը հոն կ'ըլլայ թէ՛ մսավաճառ, թէ՛ հացագործ եւ թէ՛ որմնագիր: Լէյն գիւղերուն մէջ, ուր փոքր շուկայ մը կայ, բայց այնքան փոքր որ երկու որմնագիր, երկու ատաղձագործ, երկու երկաթագործ չեն կրնար միասին ապրիլ, հոն աշխատութեան նախնական բաժանում մը միայն կրնայ ըլլալ եւ գիւղացին կը հարկադրուի այդ արհեստներու տարբական բաները սորվիլ ու գործել: Իսկ մեծ քաղաքներու մէջ, ուր մեծ շուկաներ կան եւ կրնան ամէն արտադրութիւններ փոխանակուիլ, այս փոխանակակութեան կարելիութեան շափ, աշխատութիւննին կը բաժնուի, աշխատողները կը համախմբուին, եւ հոն, այդ մեծ քաղաքներու մէջ, կը յառաջագրիմէ ճարտարութիւնը:

